«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օինանական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում.

Դաստիարակ՝Բալասան Նադարյան

Մանկապարտեզ՝ «ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ » ՀՈԱԿ

2023թ.

Ներածություն

«Ես գրեթե չեմ լսել, որ ծնողներն ասեն. «Մենք պետք է դաստաստիարակենք, ինչու՞ է մանկապարտեզը խանգարում»: Եվ չեմ լսել, որ մանկավարժն ասի Մենք պետք է դաստաստիարակենք, ինչու ՞ է ընտանիքըխանգարում» **Անտոն Մակարենկո**

Երեխան ունի տեսնելու, մտածելու և զգալու իր առանձնահատուկ ունակությունները: Չկա ավելի հիմար բան, քան դրանք մեր ունակություններով փոխարինել փորձերը: **Ժան Ժակ Ռուսո**

Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օինանական ներկայացուցիչների) հետ

Ընտանիքը երեխայի սոցիալականացման առաջին օղակն է, որտեղ նա ճանաչում է ինքն իրեն և ձևավորվում որպես անհատ: Երեխայի սոցիալականացման երկրոդ օղակը նախադպրոցական ուսումնական հաստատությունն է, որտեղ երեխան շփում է դաստիարակների և հասակակիցների հետ: Երեխաների համակողմանի և ներդաշնակ զարգացման համար կարևոր է համարում մանկավարժական աշխատողի համագործակցությունը սանի ծնողի (օրինական ներկայացուցչի) հետ, որը նպաստում է ծնողի անմիջական մասնակցությամբ մանկապարտեզում կրթական աշխատանքների, ինչպես նաև ընտանիքում սանի ճիշտ դաստիարակության կազմակերպմանը:
Թեմայի արդիականություն: Մանկավարժական աշխատողի և սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցչի) համագործակցությունը, որն օգնում է սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում խնդիրներ լուծելիս՝ հիմք է դառնում երեխայի հոգեսոցիալական, համակողմանի և ներդաշնակ զարգացման համար, ինչը նախադպրոցական մանկավարժության մեջ սահմանվող առաջնահերթություններից է:

Համապատասխանությունը նոր չափորոշչի պահանջներին: Մեր խորին համոզմամբ, սանի ծնողը (նրա օրինական ներկայացուցիչը) պետք է որոշակի գիտելիքներ ունենա նոր հաստատված նախադպրոցական կրթության նախադպրոցական պետական կրթական չափորոշչիմասին, պետք է նաև տեղյակ լինի չափորոշչով ներկայացված վերջնարդյունքներին, ինչպես նաև կարողունակություններին, որպեսզի մանկավարժական աշխատողի հետ զուգընթաց նպաստի երեխաների հոգեսոցիալական, բազմակողմանի և ներդաշնակ զարգացմանը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է մանկավարժական աշխատողի և սաների ծնողների (նրանց օինանական ներկայացուցիչների) համագործակցության տարբեր ձևերի և մեթոդների միջոցով լուծել սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերը:

Նպատակից էլ բխեցնենք խնդիրները՝

✓ ուսումնասիրել համապատասխան գրականություն և պարզել, թե որքանով է կարևոր մանկավարժական աշխատողի և ծնողի (նրանց օինանական ներկայացուցիչների) համագործակցությունը՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և համագործակցությունը՝ ընտանեկան դաստիարակության հարցում, ✓

ուսումնասիրել և մշակել մանկավարժական աշխատողի և սաների ծնողների (նրանց օինանական ներկայացուցիչների) համագործակցության տարբեր ձևեր, որոնք նպաստում են սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերի լուծմանը: ✓

պարզել, թե որքանով են ուսումնասիրվող մանկապարտեզի սաների ծնողները (նրանց օրինական ներկայացուցիչները) համագործակցում մանկավարժական աշխատողների հետ՝ ներգրաված լինելով կրթական աշխատանքների կազմակերպման մեջ: ✓

պարզել, թե ուսումնասիրվող մանկապարտեզի սաների ծնողները (նրանց օրինական ներկայացուցիչները) ինչպես են իրականացնում ընտանեկան դաստիարակությունը և որքանով են համագործակցում մանկավարժական աշխատողների հետ: ✓

Կազմակերպել և վարել սեմինարներ՝ բարձարացնելու սաների ծնողների ներգրավածությունը մանկապարտեզի կրթական աշխատանքների կազմակերպման մեջ և նպաստելու մանկավարժական աշխատողի համագործակցության միջոցով ընտանեկան դաստիարակության իրականացմանը: **Օգտակարություն:** Հետազոտական այս աշխատանքը կարող է օգտակար լինել նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների, սաների ծնողների, ինչպես նաև ուսանողների համար՝ ծառայելով որպես մեթոդական ուղեցույց: Աշխատանքը բաղկացած է երկու գլխից (տեսական և գործնական), եզրակացութուններից ու առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից:

Մանկավարժական աշխատողի և ծնողի համագործակցությունը սաների կրթական աշխատանքների կազմակերպման հարցում

Սաների կրթական աշխատանքների կազմակերպման հաջողությունը կախված է նրանից, թե ինչպես կզարգանան մանկավարժական աշխատողի և սաների ծնողների հարաբերությունները: Իսկ կրթական աշխատանքների կազմակերպման արդյունքը կարող է հաջող լինել, երբ նրանք դառնան համախոհներ: Համագործակցությունը ստեղծում է կրթական միջավայրում ամենակարևոր գործոնները, որոնք պայմանավորում են կրթական ողջ գործընթացի հաջողությունը կամ ձախողումը: Ժամանակակից դժվարին պայմաններում ծնողը կարիք ունի մանկավարժական աշխատողի համակարգված և որակյալ օգնության: Մանկավարժական աշխատողի և ծնողի փոխգործակցության գործընթացն ուղղված է ծնողների ակտիվ ներգրավմանը կրթական գործընթացում. տոնահանդեսների, սպորտլանդիաների, բաց պարապմունքների նախապատրատում, համատեղ դիդակտիկ նյութերի պատրաստում և այլն: Մանկավարժական աշխատողի և սաների ծնողների համագործակցությունը ենթադրում է, որ ծնողները ունեն պատասխանատվություն, իսկ դաստիարակները՝ ընտանիքակենտրոն մանկավարժական գործունեություն: Նման համագործակցության հաստատման հիմնական միջոցը կրթական

աշխատանքների կազմակերպումն է, որի արդյունքը կլինի նախադպրոցական տարիքի երեխաների երեխայակենտրոն կրթության նպատակների և սկզբունքների իրականացումը: Մանկավարժական աշխատողի և ծնողի համագործակցության կառուցման համար գոյություն ունի մեթոդիկա՝ մի քանի փուլերով: **Առաջին փուլ** Եկեք ծանոթանանք». ծանություն մանկապարտեզի, մանկապարրեզի անձնակազմի, կրթական ծրագրերի հետ: Այն ծնողի առջև կբացի համագործակցային աշխատանքի հնարավորությունները՝ կապված սաների կրթական աշխատանքների կազմակերպման հետ: **Երկրորդ փուլ** Եկե՛ք բարեկամանանք. այս փուլում ծնողներին առաջարկվում է համագործակցության ակտիվ մեթոդներ՝ թրեյինգներ, կլոր սեղան, սեմիանար և այլն: **Երրորդ փուլ** Եկե՛ք միասին իմանանք». այս փուլում կարելի է խոսել գործառույթների մասին: Ծնողը տեսնում է, թե ինչպես է դաստիարակը ընդունում իր սանին, ինչ աշխատանք է տանում մյուս սաների հետ: Սա միաժամանակ և՛ տեղեկատվություն է, և՛ ուսուցում: Մանկապարտեզի և ընտանիքի համատեղ աշխատանքը հիմնված է հետևյալ հիմնական դրույթների վրա, որոնք որոշում են կրթական աշխատանքի կազմակերպման բովանդակությունը, կազմակերպումը և մեթոդաբանությունը.
✓ միասնություն մանկապարտեզի և ընտանիքի աշխատանքում՝ երեխաների կրթության գործում. այն ձեռք է բերվում, երբ համապարփակ կրթության նպատակներն ու խնդիրները լավ գիտեն և հասկանում են ոչ միայն մանկավարժները, այլև ծնողները, երբ ծնողները ծանոթ են մանկահասակ երեխաների կրթության հիմնական բովանդակությանը, մեթոդներին և որոշակիորեն տիրապետում են դրանց,
✓ փոխադարձ վստահություն մանկավարաժական աշխատողի և ծնողների միջև. նախադպրոցական տարիքի երեխաների կրթության վերաբերյալ համատեղ աշխատանքում փոխադարձ օգնություն ու վստահություն:
✓ ծնողների հետ աշխատանքի անհատական և կոլեկտիվ ձևերը լրացնում են միմյաց. դաստիարակի ամենօրյա շփումը երեխայի հոր կամ մոր հետ՝ մեծ հնարավորություններ է ստեղծում անհատական աշխատանքի, ընտանիքմանկապարտեզ հարաբերությունների ամրապնդման համար,
✓ համակարգված, որոշակի պլանի համաձայն, ամբողջ տարվա ընթացքում

մանկավարժական աշխատողի և ծնողների միջև համագործակցություն՝ հաշվի առնելով երեխաների հետ կրթական աշխատանքի առաջադրանքները և բովանդակությունը: Ահա նմանատիպ կերպով մենք կարող ենք ապահովել սաների կրթական աշխատանքների կազմակերպման գործընթացը՝ նպաստելով երեխաների կարողունակությունների զարգացմանը:

Մանկավարժական աշխատողի և ծնողի համագործակցության դերը ընտանեկան դաստիարակության հարցում

Երեխայի ուսուցման նպատակն է այնպես անել, որ նա ընդունակ լինի շարունակելու իր զարգացումն առանց ուսուցչի օգնության: **Էլբերտ Հաբարդ**

Ընտանիքը հասարակության առաջին սոցիալական օղակն է, ուր դրվում են երեխայի անձնավորության հիմքերը և կառուցվում է նրա սոցիալական կերպարը [1 էջ 153]: Ընտանիքը վաղ տարիքից ուղղորդում է երեխաների գիտակցությունը, կամքը, զգացմունքները: Ծնողների առաջնորդությամբ երեխան ձեռք է բերում իր առաջին կենսափորձը, տարրական գիտելիքներ շրջակա իրականության, հասարակության մեջ կյանքի հմտությունների և սովորությունների մասին: Մեծ է ընտանիքի դերը երեխայի աշխարհայացքի հիմքերի ձևավորման, վարքագծի բարոյական նորմերի յուրացման, մարդկանց, նրանց արարքների նկատմամբ վերաբերմունքը որոշելու գործում: Ընտանեկան դաստիարակությունը մանկավարժական համակարգ է՝ ուղղված կրթադաստիարակչական խնդիրների իրականացմանը ընտանիքի բոլոր անդամների համատեղ մանկավարժական ջանքերի շնորհիվ [1 էջ 154]: **Ընտանեկան դաստիարակությունը բնութագրվում է խորը հուզական, մտերմիկ բնավորությամբ:** Ընտանեկան դաստիարակության «ուղեցույցը» ծնողական սերն է երեխաների նկատմամբ և երեխաների փոխադարձ զգացմունքները՝ (կապվածություն, վստահություն, քնքշություն) ծնողների նկատմամբ [2 էջ 221]: Որպեսզի ընտանիքը հաջողությամբ հաղթահարի երեխաների դաստիարակությունը, ծնողները պետք է իմանան հիմնական մանկավարժական պահանջները և ստեղծեն անհրաժեշտ պայմաններ՝

ընտանիքում երեխա մեծացնելու համար: Որո՞նք են այս պայմանները: Առաջին հերթին այն ընտանեկան մթնոլորտը, երբ ծնողներից և ընտանիքի անդամներից յուրաքանչյուրը հասկանում է երեխաների դաստիարակության պատասխանատվությունը: Ընտանեկան ճիշտ դաստիարակության պայմանները ռացիոնալ կազմակերպված կյանքն է, կենսակերպը ընտանիքում: Ընտանիքում ապրելով՝ երեխան պետք է վստահ լինի, որ ինչ-որ մեկն իրեն շատ է սիրում, և նա էլ անսահման սիրում է մեկին: Նման սերը ստեղծում է ապահովության զգացում, հոգևոր հարմարավետություն: Միաժամանակ մարդն ավելի ակտիվ է ընկալում աշխարհը, հեշտությամբ յուրացնում գիտելիքը: Նրա տաղանդներն ավելի ազատ են բացահայտվում, նա ավելի վստահ է որոշում կյանքի իր ուղին, ընտրում ընկերներին: Ընտանիքում երեխաների դաստիարակության մյուս կարևոր պայմանը ծնողների հեղինակությունն է: Շատ կարևոր է, որ ընտանիքում ամրապնդվեն ճիշտ վարքագծի հմտություններն ու սովորությունները, որոնք արտացոլվում են երեխաների մոտ նաև մանկապարտեզում, քանի որ, ինչպես ասում են, երեխան ընտանիքի հայելին է: Ծնողների և մանկավարժական աշխատողի միասնական համակարգված պահանջներն ընտանիքում՝ երեխաների պատշաճ դաստիարակության պայմաններից են: Այնտեղ, որտեղ մանկավարժը և ծնողը գործում են համատեղ, ավելի լավ է տարվում երեխայի դաստիարակչական աշխատանքը: Նախադպրոցական տարիքի երեխայի լիարժեք դաստիարակությունը տեղի է ունենում ընտանիքի և նախադպրոցական հաստատության միաժամանակյա ազդեցության պայմաններում: Իսկ մանկավարժական աշխատողը, որպես կանոն, նման դրական դերում ընդունվում է որպես կրթության իրավահավասար գործընկեր, ում վստահում են, լսում խորհուրդները:Մանկավարժական ազդեցությունների միասնական համակարգը և մանկապարտեզում ու ընտանիքում երեխային ուղղված միասնական պահանջները նպաստում են երեխայի վարքի որոշակի ոճի ձևավորմանը: Միևնույն ժամանակ, երեխան ավելի քիչ դժվարություններ է ունենում վարքի, բարոյական նորմերի, սովորությունների յուրացման գործընթացում, և ավելի հեշտ է տիրապետում կրթական, աշխատանքային գործունեության հմտություններին, շրջապատող երեխաների և մեծահասակների հետ շփման կանոններին: Համագործակցությունը կարևոր է այնքանով, որ ծնողներին անհրաժեշտ է մանկավարժական գիտելիքների համակարգ և դրանք կիրառելու կարողություն՝ հաշվի առնելով երեխաների տարիքային և սոցիալ-հոգեբանական

առանձնահատկությունները: Ընտանիքի հետ նպատակաուղղված շփման սոցիալական նշանակությունը կայանում է նրանում, որ մանկավարժական աշխատողը ճիշտ ձևով ուղղելով ծնողների ազդեցությունը երեխաների վրա՝ ազդում է նաև ներընտանեկան հարաբերությունների վերակազմավորման վրա, նպաստում ծնողների անհատականության բարելավմանը: Դրանով իսկ արդեն բարձրանում է բնակչության ընդհանուր մշակույթի մակարդակը:Համագործակցությունը նպաստում է նրան, որ կատարելագործվում է ծնողների մանկավարժական կուլտուրան: Դրա շրջանակներում ստեղծված ծնողական թիմի գործունեությունը հնարարվորություն է տալիս փորձի փոխանակման միջոցով ավելի հաջող իրականացնել ընտանեկան դաստիարակությունը: Մանկավարժական աշխատողի հիմնական խնդիրը պետք է լինի ակտիվացնել ընտանիքի մանկավարժական, դաստիարակչական գործունեությունը՝ դրան տալով նպատակային և սոցիալապես նշանակալի բնույթ; Փորձենք դիտարկել մանկապարտեզի առավելությունները՝ երեխայի զարգացման տարբեր ոլորտների վրա ազդեցության տեսանյկյունից.Մանկավարժի և ընտանիքի փոխհարաբերության հիմքում ընկած է համագործակցությունը: Մանկավարժները պետք է ստեղծեն ներդաշնակ, ամուր կապ՝ ի շահ երեխայի դաստիարակության: Կարևոր է, որ ծնողները հավասար ընկալեն մանկավարժ-երեխա փոխհարաբերությունը, զգան դաստիարակի մասնագիտական հմտության արժեքը, գնահատեն նրա անձնային հականիշները և մասնակցեն մանկապարտեզում իրականացվող կրթության, դաստիարակության և զարգացման գործընթացին: Այդ համագործակցությունից շահում է, թե՛ երեխան, թե՛ ընտանիքը, թե՛ տվյալ հաստատությունը: Վաղ մանկության շրջանում երեխաներն իրենց ինքնուրույնությունը, անհատականությունը հաստատելու, ապահով, բարեկեցիկ կյանք ունենալու համար մեծապես կախված են լինում իրենց ընտանիքից: Ծնողները երեխայի առաջին ուսուցիչներն են և առաջին օրինական ծառայողները: Իսկ երեխաները հրաշալի ընդօրինաողներ են: Այդ իսկ պատճառով ծնողները (և երեխայի հետ շփվող բոլոր մեծահասակները) պետք է հետևեն իրենց ցանկացած քայլին, խոսքին և կատարալ գործողություններին: Բայց ընտանիքները շատ տարբեր են, և չենք կարող ակնկալել, որ բոլոր ընտանիքները նույն կերպ կմասնակցեն երեխայի կրթությանը, խնամքին, դաստիարակությանը, հնարավորինս շատ ժամանակ կհատկացնեն նրանց և կաջակցեն ամենափոքր հարցերում:Այս պարագայում մեծ է մանկապարտեզի և պրոֆեսիոնալ մանկավարժի

դերը: Երեխայի հետ աշխատող դաստիարակը պետք է խոսի ծնողի հետ, քննարկի երեխային վերաբերվող բոլոր խնդիրները: Ծնողի հետ արդյունավետ հաղորդակցում ապահովելու համար, դաստիարակը պետք է բազմաբնույթ գործողություններ ծավալի, տարբեր ռազմավարություն կիրառի, լինի ստեղծագործ, ճկուն, բարեհամբույր, մեծահոգի, համբերատար, բանիմաց և հոգատար: Ծնողի տեղեկացված լինելը երեխայի ցանկացած արարքի մասին, էլ ավելի է հեշտացնում համագործակցությունը ծնողի հետ, ավելի միավորում է նրանց որպես գործընկերներ և արդյունավետ դարձնում աշխատանքը: Վաղ տարիքի երեխաների սոցիալական զարգացումը կանոնակարգվում է երկու կառույցների միջոցով՝ նախադպրոցական հաստատություն և ընտանիք: Որոշ մանկավարժներ, վստահելով իրենց գիտելիքներին, համարում են, որ իրենք բոլորից ճիշտ են դաստիարակում: Այդպես են մտածում նաև շատ ծնողներ՝ կարծելով, որ իրենց երեխային ավելի լավ գիտեն և հաջողությամբ կարող են լուծել նրան վերաբերող ցանկացած խնդիր: Այս երկու մոտեցումներն էլ թերի են: Անհրաժեշտ է ի մի բերեր այդ երկու սոցիալական ինստիտուտների (ընտանիքի և նախադպրոցական հաստատության) ուժեղ և թույլ կողմերը: Երեխայի զարգացման որոշ ոլորտներում, օրինակ՝ հուզական, ֆիզիկական, ընտանիքի հնարավորություններն են ավելին, իսկ ուսուցման, ստեղծագործական ունակությունների զարգացման և այլն հարցերում՝ մանկապարտեզինը և այլն: Առավել արդյունավետ աշխատանքի համար ժամանակակից մանկապարտեզի և ընտանիքի փոխհարաբերության հիմքում պետք է դրվի համագործակցությունը: Մանկավարժները պետք է նախաձեռնող լինեն, ստեղծեն ներդաշնակ, ամուր կապ՝ ի շահ երեխայի զարգացման: Ամենից առաջ անհրաժեշտ է մանկապարտեզի դռները լայն բացել ծնողների և ընտանիքի մյուս անդամների առաջ: Հարկավոր է ընդլայնել ավանդական հաղորդակցման (տոնակատարություններ, ծնողական հավաքներ և այլն) շրջանակները: Վաղ մանկության շրջանում երեխաներին իրենց ինքնությունը, անհատականությունը հաստատելու, ապահովություն, խնամք և բարեկեցություն ունենալու համար կախված են լինում իրենց ընտանիքներից: Ընտանիքների և մանկապարտեզի հաղորդակցումը նպաստում է նրանց փոխըմբռմանն ու կողմնորոշմանը: Ընտանիքների և նախադպրոցական հաստատության գործունեության համատեղ ծրագիրը հեշտացնում է երեխայի սոցիալական զարգացումը՝ սոցիալականացումը:

Մանկավարժական աշխատողի և ծնողի համագործակցության ձևերն ու տեսակները կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերի լուծման համտեքստում

Նաղադպրոցական ուսումնական հաստատություններում կապը ծնողի հետ երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում: Ծնողների հետ տարվող աշխատանքի բարելավման բոլոր միջոցները ամենից առաջ պետք է ուղղվեն նախադպրոցական հաստատության և ընտանիքի համագործակցության ամրապնդմանը՝ երեխաների բազմակողմանի դաստիարակության և զարգացման գործում: Ծնողները մշտապես կարիք ունեն իմանալու մանկապարտեզի տեսակետն իրենց երեխայի մասին: Միևնույն ժամանակ մանկապարտեզն իրապես շահում է ծնողների՝ տվյալ բնագավառին իրազեկվածությունից և երեխայի դաստիարակության գործին նրանց ներդրումներից:Չպետք է մոռանալ, որ ծնողների հետ հաջողված յուրաքանչյուր համագործակցությունը մեծ արժեք ունի, որից երեխան միայն կշահի: Ծնողների հետ ցանկացած շփման ձև պետք է զուգակցել նրանց նկատմամբ ցուցաբերված մեծագույն հարգանքով: Կարելի է ծնողներից շատ բան սովորել, քանի որ նրանք ավելի լավ գիտեն իրենց երեխաներին: Կողմերի համագործակցությունը պետք է հիմնված լինի մարդկային բարձր ու բարոյական որակների վրա:Այստեղ չի կարելի ստորադասել որևէ կողմի գործառույթները: Համագործացության արդյունքում թե՛ ծնողը, թե՛ դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, համակրանքների ու հակակրանքների մասին: Դրական արդյունք կստանանք այն ժամանակ, երբ ծնողների և դաստիարակների միջև կա համատեղ աշխատանք: Ծնողների մանկապարտեզի մանկավարժական աշխատանքներին ակտիվ մասնակցությունից շահում են մանկապարտեզի մանկավարժական գործընթացի բոլոր սուբյեկտները: Մանկավարժական գործընթացի բոլոր մասնակիցների ակտիվ դիրքորոշումը նպաստում է երեխաների դաստիարակությանը համակցված, փոխպայմանավորված և փոխպատասխանատու գործողությունների միջոցով: Մանկապարտեզի և ընտանիքի համագործակցությունն օգնում է երկուստեք ճանաչելու և հաշվի առնելու երեխայի դաստիարակության իրական պայմանները՝

այն արդյունավետ կազմակերպելու նպատակով: Յուրաքանչյուր ծնող պետք է գիտակցի իր ակտիվ մասնակցության անհրաժեշտությունը երեխայի դաստիարակության գործընթացին, հանդես գա մանկավարժական գործընթացի սուբյեկտի, մանկավարժի օգնականի և աջակցի դերում, հրաժարվելով պահանջատիրոջ կարգավիճակից: Որքան ավելի սերտ և արդյունավետ լինի ուսումնական հաստատություն- ընտանիք կապը,այնքան ավելի մեծ աջակցություն կստանան երեխաները՝ուսումնառության և դաստիարակության ընթացքը ավելի դրական ու արդյունավետ կազմակերպելու առումով: Քանի որ երեխայի հաճախելը նախադպրոցական ուսումնական հաստատություն ընտանիքին չի ազատում նրան ընտանեկան միջավայրում դաստիարակելու, զարգացնելու և կրթելու պարտավորությունից, ըստ նախադպրոցական կրթության մասին ՀՀ օրենքի: Մանկապարտեզի և ընտանիքի փոխադարձ կապի ձևերը պարբերաբար վերանայվում և լրամշակվում են: Համագործակցության ավանդական դարձած ձևերին ավելանում են ժամանակակից եղանակները, որոնք բխում են հասարակության նախադպրոցական կրթությանը ներկայացվող այսօրվա պահանջներից:Նախադպրոցական հիմնարկները ծնողների հետ աշխատանք կազմակերպելիս օգտագործում են բազմազան անհատական և կոլեկտիվ ձևեր: Ընտանիքի հետ համագործակցության ձևերն են.

Այցելություն երեխայի ընտանիք: Մանկավարժական անձնակազմից որևէ մեկը՝ հիմնականում դաստիարակը այցելում է տուն՝ տեսնելու և ճանաչելու երեխային , նրա ընտանեկան պայմանները : Համագործակցության այս ձևը շատ բան է տալիս ուսումնասիրության համար՝ կապ հաստատելով երեխայի, նրա ծնողների հետ, հստակեցնելով կրթության պայմանները: Մանկավարժական աշխատողը պետք է ծնողների հետ նախապես համաձայնեցնի այցելության հարմար ժամը, ինչպես նաև որոշի այցելության նպատակը: Անցնելով տան շեմը՝ մանկավարժական աշխատողը ֆիքսում է ընտանիքի մթնոլորտը, ինչպես նաև այն, թե ընտանիքի անդամներից ում է հանդիպում, ով է աջակցում զրույցին, ինչպես են ուղղակիորեն քննարկվում բարձրացված հարցերը: Բաց դռների օրը՝ լինելով աշխատանքի բավականին տարածված ձև, հնարավորություն է տալիս ծնողներին ծանոթանալ նախադպրոցական հաստատությանը, նրա ավանդույթներին, կանոններին, կրթական աշխատանքի առանձնահատկություններին [2 էջ 215]: Մանկավարժական աշխատողը կարող է ցույց տալ նախադպրոցական հաստատության աշխատանքի

մի հատված (երեխաների կոլեկտիվ աշխատանք, զբոսանք և այլն): Շրջայցից և դիտումից հետո դաստիարակը կամ մեթոդիստը զրուցում է ծնողների հետ, պարզում նրանց տպավորությունները և պատասխանում հարցերին: Հարցազրույցներն անցկացվում են ինչպես անհատական, այնպես էլ խմբակային: Երկու դեպքում էլ նպատակը հստակ սահմանված է. ինչ է պետք հստակեցնել, ինչով ենք ուզում օգնել: Զրույցի բովանդակությունը հակիրճ է, բովանդակալից ծնողների համար և ներկայացվում է այնպես, որպեսզի խրախուսի ծնողներին խոսել: Մանկավարժական աշխատողը պետք է կարողանա ոչ միայն խոսել, այլև լսել ծնողներին: Խորհրդակցություններ: Սովորաբար կազմվում է խորհրդատվությունների համակարգ, որն իրականացվում է անհատապես կամ ծնողների ենթախմբի համար: Խմբային խորհրդակցությունների կարող են հրավիրել տարբեր խմբերի ծնողներ, ովքեր ունեն խնդիրներ՝ երեխաների դաստիարակության հետ, կամ, ընդհակառակը, հաջողություններ կրթության մեջ (քմահաճ երեխաներ, նկարելու, երաժշտության ընդգծված ունակություններով երեխաներ): Խորհրդակցության նպատակը ծնողների կողմից որոշակի գիտելիքների և հմտությունների յուրացումն է. օգնել նրանց լուծել խնդիրները: Խորհրդատվության ձևերը տարբեր են (մասնագետի որակավորված զեկույց, որին հաջորդում է քննարկում, խորհրդակցությանը հրավիրված բոլորի կողմից նախապես կարդացված հոդվածի քննարկում, գործնական դաս, օրինակ՝ «Ինչպես սովորեցնել բանաստեղծություն» թեմայով. երեխաների հետ»): Ծնողները, հատկապես երիտասարդները, պետք է գործնական հմտություններ ձեռք բերեն երեխաներին դաստիարակելու գործում: Ցանկալի է նրանց հրավիրել սեմինարների: Աշխատանքի այս ձևը հնարավորություն է տալիս խոսել ուսուցման մեթոդների և տեխնիկայի մասին և ցույց տալ ինչպես կիրառել դրանք: Գործնական սեմինարներն ուղղված են նաև ընտանեկան մի շարք թեմաներ քննարկելու համար: Կոնֆերանսը կարող է անցկացվել մեկ նախադպրոցական հաստատության շրջանակներում, սակայն կիրառվում են նաև քաղաքային մասշտաբների համաժողովներ: Կարևոր է որոշել բուն թեման: Գիտաժողովի համար պատրաստվում է մանկական աշխատանքների ցուցահանդես, մանկավարժական գրականություն, նախադպրոցական հաստատությունների աշխատանքն արտացոլող նյութեր եւ այլն: Համաժողովը կարող է ավարտել երեխաների, նախադպրոցական հաստատության աշխատակիցների, ընտանիքի անդամների համատեղ համերգով: Ծնողներին մանկավարժական գրականությանը

ծանոթացնելու համար նպատակահարմար է ստեղծել շարժական գրադարաններ՝ հատուկ թղթապանակներում ընտրելով կոնկրետ թեմայով հոդվածներ: Մանկապարտեզի և ընտանիքի համագործակցության համեմատաբար նոր ձևերից պետք է նշել հանգստյան երեկոները՝ մանկավարժական աշխատողների, ծնողների, երեխաների մասնակցությամբ. սպորտային ժամանց, հավաքույթներ, ներկայացումների նախապատրաստություն, հանդիպումներ. «Եկեք ծանոթանանք», «Ուրախացնենք միմյանց» և այլն: Այս և ժամանակակից այլ համագործակցության ձևերը օգնում են ամրապնդել մանկավարժական աշխատողի և սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցչի) համագործակցությունը՝ ի նպաստ երեխայի:

Ծնողական ժողովներ՝

Ժողովներն այն պաշտոնական հանդիպումներն են ,որոնք նպատակ ունեն քննարկելու երեխաների առաջադիմությունը ,ծնողներին հնարավորություն են տալիս կիսելու իրենց գաղափարներն ու մտահոգությունները: Ժողովները կարող են օգտակար լինել երեխայի անհատական պլանների կազմման և քննարկման համար:Եթե ժամանակի պակասի պատճառով չի հաջողվում անմիջական հաղորդակցումը,ապա ընտանիքի և մանկավարժների միջև կապ պահպանելու համար կարող են օգտագործվել գրավոր հաղորդակցման որոշ ձևեր: Գրավոր տեղեկությունը հաղորդելիս պետք է վստահ լինենք,որ մյուս կողմը ստացել է գրությունը: Գրավոր հաղորդակցման տեսակներից են.

1. Բրոշյուրները կարող են օգնել ծնողներին ծանոթանալ կրթական ծրագրին:

Դրանք կարող են հակիրճ նկարագրել ծրագրի էությունն ու նպատակներն և ընդհանուր տեղեկոը՝ություն տալ դրա մասին:

2. Շաբաթական գրությունները՝

Ամեն շաբաթ մի առանձին գրություն կարելի է ուղղարկել յուրաքանչյուր ընտանիքի՝ տեղեկացնելու համար իրենց երեխայի նախընտրելի գործողության տեսակի մասին , ինչպես նաև որևէ այլ տեղեկություն հաղորդելու համար:

3. Ոչ պաշտոնական գրությունները՝

Մանկավարժական կազմը կարող է երեխայի հետ տուն ուղղարկել կարճ գրություններ , որպեսզի ընտանիքի անդամներին տեղեկացնի երեխայի հմտությունների ձեռքբերումների կամ որևէ այլ գործունեության մասին ,ինչպես նաև շնորհակալություն հայտնեն ուսումնական հաստատությանն աջակցելու համար: Ընտանիքի անդամները նույնպես կարող են մանկավարժներին ուղղարկել գրություններ՝ իրենց երախտագիտությունը հայտնելու կամ որևէ խնդրանք հաղորդելու համար :

4. Պատի տեղեկատվական թերթեր՝

Պատ տեղեկատվական թերթը կարող է օգտակար լինել ընտանիքներին՝ միշտ թարմ տեղեկություն հաղորդելով նրանց ժողովների և հատուկ իրադարձությունների , ամենօրյա պարապմունքների բաշխման ցանկի, ընտանիքների համար նախատեսված միջոցառումների, ինչպես նաև՝ ընդհանուր առմամբ ուսումնական հաստատության անցուդարձի մասին:

5. Առաջարկությունների տուփեր՝

Ծնողներին առաջարկվում է իրենց մտքերը, մտահոգությունները, առաջարկությունները և հարցերը գրավոր ներկայացնել մանկավարժական կոլեկտիվի անդամներին առաջարկության տուփի միջոցով, որը տեղադրվում է

միջանցքում: Ընտանիքի հետ համագործակցության ձևերից են նաև բաց դռների օրերը, կոնսուլտացիաները-դասախոսություններ, հարց ու պատասխանի երեկոները, երիտասարդ ծնողների դպրոցները և հատուկ կազմակեպվող գիտական կոնֆերանսները ծնողներին հուզող թեմաների շուրջ: Երիտասարդ ծնողների հետ կազմակերպվում են նաև սեմինար-պրակտիկումներ: Բավական արդյունավետ են համատեղ միջոցառումները, որոնք կարող են տարբեր նպատակների ծառայել: Կոնֆերանսներն անցկացվում են ընտանեկան դաստիարակության պրոբլեմներ քննարկելու համար: Դրանց նախապատրաստմանը ներգրավվում է լայն ծնողական ակտիվը: Ընտանիքում երեխաների դաստիարակության գործին մեծապես օգնում են ծնողների համար կազմակերպվող դասախոսությունները, որոնք կարող են նվիրվել դաստիրակության, երեխաների կյանքի և առողջության պահպանման տարբեր հարցերին: Ծնողների հետ հետաքրքիր և օգտակար աշխատանքի ձև կարող են դառնալ Հարց ու պատասխանի երեկոները: Հարցերը նախապես հավաքվում, դասակարգվում են և որոշվում է ամեն մի երեկոյի գլխավոր ուղղությունը:

Ծնողական ժողովների կազմակերպում

Ծնողական ժողովները դրանք այն պաշտոնական հանդիպումներն են,որոնց շրջանակներում լուծվում են կազմնակերպչական խնդիրները,ծնողները ստանում են տեղեկատվություն երեխաների ուսումնական գործընթացի ,նրանց վարքի և առաջադիմության մասին, քննարկում են երեխաների առաջադիմությունը,որը ծնողներին հնարավորություն է տալիս կիսելու իրենց գաղապարներն ու մտահոգություններն: Ժողովները կարող են օգտակար լինել երեխաների հետ աշխատանքի անհատական պլանների կազմման և քննարկման համար:

Ծնողական ժողովներն անցկացվում են խմբային և ընդհանուր ձևով: Ընդհանուր ծնողական ժողովում քննարկման են դրվում հարցեր, որոնք կապված են երեխաների կյանքի և առողջության պահպանման, կրթական-դաստիարակչական խնդիրների հետ: Դրանք անցկացվում են տարեկան երեք անգամ, անհրաժեշտության դեպքում կարելի է անցկացնել արտահերթ ժողով: Խմբային ծնողական ժողովը ծնողների կողմից տվյալ տարիքի երեխաների դաստիարակության խնդիրներին, բովանդակությանը և մեթոդներին ծանոթանալու, ինչպես նաև մանկավարժական գիտելիքների պրոպագանդման գործարար ձև է: Դաստիարակի խնդիրն է ոչ թե ծնողներին սովորեցնել, այլ նրանց հետ կիսել աշխատանքի տարիների ընթացքում կուտակված երեխաների դաստիարակության փորձը, քանի որ իր աշխատանքի բնույթով ուսուցիչը ավելի շատ գրականություն է կարդում կրթության մասին, քան ծնողները և իր հաղորդակցման շրջանակը: Ծնողներին պետք է ծանոթացնել կրթական աշխատանքի հիմնական ոլորտներին, որպեսզի նրանք հասկանան ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության կարևորությունը: Ընտանիքի անդամներին տեղեկություններ են տրամադրվում երեխաների հետ իրականացվող աշխատանքների և երեխաներից ունեցած ակնկալիքների վերաբերյալ: Ծնողներին պետք է տեղյակ պահել , թե ինչպես կարող են նրանք շարունակել աշխատանքները տանը: Ծնողների համար կազմակերպել ծնողական կրթության դասընթացներ՝ հիմնված ընտանիքների կարիքների և հետաքրքրությունների վրա: Դասընթացներում ներառել տեղեկություններ երեխայի տարիքային զարգացման, կարգապահության և այլ հարցերի վերաբերյալ: Ծնողի հետ կապը շատ է կարևորվում փորձագետների կողմից՝ երեխայի դաստիարակության ու կարիքների հանդեպ տանը և մանկապարտեզում միանման մոտեցում ապահովելու և երեխայի հատուկ կարիքներին ճիշտ արձագանքելու համար: Հաճախ ծնողների հետ աշխատանքը սահ-մանափակվում է ծնողական ժողովների կազմակերպմամբ, որոնք կրթական նշանակություն չեն ունենում, թեև ուսումնական պլանի հա-մաձայն պետք է նախատեսվեն ուսուցողական զեկուցումներ երեխայի զարգացման այս կամ այն թեմայի վերաբերյալ: Ծնողների հետ աշխատանքը

պետք է իրականացվի կազմակերպված, նախնական պայմանավորվածությամբ, որպեսզի այն ձևական բնույթ չկրի և ար-դյունավետ լինի բոլոր կողմերի համար: Ուսումնական հաստատության աշխատակազմի և ընտանիքների միջև համագործակցային և փոխգործուն հարաբերություններ կառուցելու համար էական նշանակություն ունեն հարգանքը և վստահությունը երեխայի և նրա ընտանիքի անդամների հանդեպ: Ծնողական ժողովների և ընտանիքի անդամների հետ այլ հանդիպումների ընթացքում դաստիարակն անպայման պետք է անդրադառնա երեխայի համակողմանի զարգացման կարևորությանը և առանձին ներկայացնի զարգացման յուրաքանչյուր ոլորտն ըստ տվյալ տարիքի երեխաների զարգացման չափորոշիչների: Երեխայի զարգացման առաջընթացի ու կարիքների վերաբերյալ քննարկումներն ու տեղեկությունների փոխանակումը օգտակար են և՛ ընտանիքի անդամների, և՛դաստիարակների; Զրույցը նպատակահարմար է սկսել դրականից, որպեսզի ծնողը համակրանքով ու հավատով լցվի դաստիարակի նկատմամբ: Խոսակցության ընթացքում դաստիարակը պետք է առանց ավելորդությունների, խորհուրդներ տա ծնողին երեխայի դաստիարակության վերաբերյալ: Պետք է ամեն ինչ անել, որպեսզի հայրերը և մայրերը հավատան դաստիարակին և լսեն նրա խորհուրդները: Ուստի ծնողական ժողովում միշտ անհրաժեշտ է վստահության մթնոլորտ ստեղծել:

Ծնողական ժողովների տեսակները

•Կազմակերպչական

•Թեմատիկ

•Ամփոփիչ

Ծնողական ժողովի նախապատրաստման կանոնները

Ծնողական ժողովի թեման պետք է լինի հրատապ և հետաքրքիր: Ծնողական ժողովը պետք է անցկացնել ծնողներին հարմար ժամին:

Ծնողները պետք է ծանոթ լինեն ժողովի պլանին: Ծնողների և դաստիարակի շփումը պետք է լինի անմիջական: Ծնողական ժողովը պետք է լինի մանկավարժորեն օգտակար: Նախ պետք է խոսել դրական հարցերի շուրջ,նոր անցնել խնդիրների քննարկմանը: Ծնողը պետք է համոզվի,որ մանկապարտեզը պատրաստ է աջակցել ծնողին՝լուծելու երեխայի հետ կապված դժվարությունները:

Գործնական աշխատանք՝ Ծնողական ժողով

Թեման- <<Ինչպես երեխային օգնել դառնալ ավելի ինքնուրույն>>

Նպատակը Ծնողները կսովորեն ճիշտ արձագանքել երեխայի ինքնուրույն լինելու ցանկություններին, կսովորեն կանոններ կամ պարտա-կանություններ սահմանել երեխաների համար և խրախուսել դրանց կատարման դեպքում: Ծնողների օգնությամբ կհասնենք նրան ,որ երեխաները կլինեն ավելի ինքնուրույն և միասին կհասնենք ինքնասպասարկման ոլորտի որոշ վերջնարդյունքների իրականացմանը:

Ներածություն Խաղացինք խաղ ծնողների հետ.<<Ասա մի բան ,որ փոքր տարիքում լավ է ստացվել քեզ մոտ,և մի բան՝ որ չի ստացվել>>: Որից հետո մենք խոսեցինք երեխաների ցանկությունների և անընդհատ նորը սովորելու,իմանալու , ինքնուրույն լինելու մասին: Խոսեցինք ինքնասպասարկման ոլորտի կարողությունների մասին , ծանոթացրինք չափորոշչային պահանջներին: Այնուհետև ծնողներին բաժանեցինք փոքր խմբերի և խնդրեցինք յուրաքանչյուր խմբի գրել մի կարճ կանոն կամ պարտականություն ,թե ինչպես երեխային օգնենք լինել ավելի ինքնուրույն:Որից հետո դրանք ի մի բերելով՝ ստացանք կանոնների մի խումբ, որոնց երեխաները պետք է հետևեն ամեն օր: Ծնողական ժողովի վերջում , իրենց իսկ կողմից սահմանված այդ կանոնները տվեցիք ծնողներին,որ իրենք տանը հետևողական լինեն դրանց կատարմանը, և պարտադիր խրախուսեն երեխային դրանց կատարման դեպքում,բայց ոչ նյութական ձևով:

Եզրակացություն Երբ ծնողներն իրենք են սահմանում երեխայի մոտ որևէ կոնկրետ կարողություն դաստիարակելու կամ սվորեցնելու խնդիրները և դրանք լուծելու քայլերը՝ կանոնները, ավելի պատրաստակամ և հետևողական են այդ կանոնները պահպանելու և մանկավարժի հետ այդ ուղղությամբ համագործակցելու հարցում:

Առաջարկություն Ծնողներին գործնական աշխատանքների միջոցով ներգրավել իրենց երեխաների կրթական խնդիրների սահմանման և այդ խնդիրները լուծելուն միտված գործողությունների մշակման աշխատանքներին: Այսպիսով, սաների դաստիարակությունը, ուսուցմումը և զարգացումը լիարժեք կիաելի է իրականացնել այն դեպքում,երբ ծնողի և մանկավարժական աշխատողների նպատակները և գործողությունները համընկնում են:

Եզրակացություն

Ամփոփելով հետազոտական այս աշխատանքը՝ գանք մի շարք եզրահանգումների՝

✓ Ուսումնասիրելով համապատասխան գրականությունը՝ պարզեցինք, որ մանկավարժական աշխատողի և ծնողի (նրանց օինանական ներկայացուցիչների) համագործակցությունը չափազանց կարևոր դերակատարում ունի մանկապարտեզում կրթական աշխատանքների գրագետ կազմակերպման համար:

✓ Ուսումնասիրելով համապատասխան գրականությունը՝ պարզեցինք նաև, թե որքան մեծ դեր է խաղում մանկավարժական աշխատողի և ծնողի (նրանց օինանական ներկայացուցիչների) համագործակցությունը՝ ընտանեկան դաստիարակության գործում, որը ամուր հիմքեր է ստեղծում երեխայի համակողմանի ու ներդաշնակ զարգացման համար:

✓ Ուսումնասիրելով և մշակելով մանկավարժական աշխատողի և սաների ծնողների (նրանց օինանական ներկայացուցիչների) համագործակցության տարբեր ձևերը, պարզեցինք, որ դրանք կարող են լավագույնս նպաստել փոխվստահության ձևավորմանը, նաև օգնում են միասին պլանավորել երեխաների կրթադաստիարակչական աշխատանքները: ✓ Նաև պարզեցինք, թե որքանով են ուսումնասիրվող մանկապարտեզում հետազոտության մեջ ընդգրկված սաների ծնողները (նրանց օրինական ներկայացուցիչները) համագործակցում մանկավարժական աշխատողների հետ՝ ներգրաված լինելով կրթական աշխատանքների կազմակերպման մեջ: Զրույցի, հարցաթերթիկի, մաթեմաթիկական վիճակագրության մեթոդների միջոցով արձնագրեցինք, որ ծնողական համայնքի համագործակցութունը մանկավարժական աշխատողների հետ, որը վերաբերում է երեխաների կրթական աշխատանքների կազմակերպմանը՝ ունի միջին մակարդակ, սակայն նրանցից շատերը մեծ կարևորություն տվեցին ընտանիք – մանկապարտեզ համագործակցությանը:
✓ Պարզեցինք, թե ուսումնասիրվող մանկապարտեզում հետազոտության մեջ ընդգրկված սաների ծնողները (նրանց օրինական ներկայացուցիչները) ինչպես են իրականացնում ընտանեկան դաստիարակությունը և որքանով են համագործակցում մանկավարժական աշխատողների հետ: Հիմնվելով հարցաթերթիկի և մաթեմաթիկական վիճակագրության վրա, կարող ենք փաստել, որ ընտանիք – մանկապարտեզ համագործակցությունը՝ ուղղված ընտանիքում երեխաների ընտանեկան դաստիարակության կազմակերպմանը՝ ունի միջինից ցածր մակարդակ: Այնուամենայնիվ, ծնողներից շատերը գտնում էին, որ ընտանիք – մանկապարտեզ համագործակցությունը երեխայի լիարժեք զարգացման կարևոր նախապայմաններից է: ✓Ձևավորող փուլում բարձարացնելու համար սաների ծնողների ներգրավածությունը մանկապարտեզի կրթական աշխատանքների կազմակերպման մեջ, ինչպես նաև նպաստելու մանկավարժական աշխատողի համագործակցության միջոցով ընտանեկան դաստիարակության իրականացմանը՝ անցկացրինք երկօրյա սեմինարներ՝ թեմատիկ տարբեր ուղղվածություններով, և պարզեցինք, որ ծնողները ունեին մանկավարժական որոշակի գիտելիքներ ստանալու հետաքրքրություն և պահանջ: ✓Արդեն ստուգիչ փուլում, ելնելով սեմինարներից և որոշակի դիտարկումներից, պարզ

դարձավ, որ ծնողների ներգրավածությունը՝ ուղղված երեխաների կրթական աշխատանքների կազմակերպմանը՝ զգալիորեն բարձրացել և գրանցվել է դրական շարժընթաց: Կատարենք մեկ կարևոր նկատառում, որն ուղղված է երեխաների ընտանեկան դաստիարակությանը. ստուգիչ փուլի արդյունքում որոշակիորեն բարձրացել է ծնողների համագործակցությունը՝ մանկավարժական աշխատողների հետ, սակայն դիագրամ 4– ը փաստում է, որ սաների ծնողները դեռևս լիարժեք վստահություն չունեն դեպի մանկավարժը, որը կարող է լուծել ընտանեկան դաստիարակության մի շարք հարցեր: Գալով ամփոփ եզրակացության, նշենք, որ միայն ճիշտ և գրագետ համագործակցության միջոցով, ինչպես նաև փոխվստահությամբ կարող ենք նպաստել երեխաների կրթական և դաստիարակչական մի շարք հարցերի լուծմանը: Երեխայի դաստիարակության և կրթության համար հիմնական պատասխանատվության կրողն ընտանիքն է: Մանկապարտեզը լրացնում, լավագույն դեպքում օգնում է ծնողին, ավարտին հասցնում նրա սկսած աշխատանքը՝ ստեղծելով առողջ, զարգացնող միջավայր՝ երեխայի զարգացման համար: Ընտանիք-մանկապարտեզ համագործակցության հաջողությունը կախված է ընտանիքի և մանկապարտեզի փոխհարաբերությունից:Մանկապարտեզը պետք է աշխատի ընտանիքի հետ, պետք է պահպանի բարեկամական, գործընկերային հարաբերություններ, որովհետև մանկապարտեզ-ընտանիք կապի ամրապնդման համար կարևորվում է մեր համատեղ աշխատանքը, որն էլ երկուստեք հաճելի է: Երբ ծնողը մասնակից է դառնում մանկապարտեզի առօրյային, խաղերին, միջոցառումներին և այլն, դա ավելի ամրացնում է մանկապարտեզ -ընտանիք կապը: Ընտանիք-պարտեզ արդյունավետ համագործակցություն մեծապես նպաստում է երեխայի զարգացմանը, դրաանից շահում են թե՛ ընտանիքթ, թե՛ պարտեզը, իսկ որ ամենակարևորն է, արդյունքում մեծապես շահում է ինքը՝ երեխան:

Բովանդակություն

Ներածություն.....2

Մանկավարժական աշխատողի և ծնողի համագործակցությունը սաների կրթական աշխատանքների կազմակերպման հարցում.....4

Մանկավարժական աշխատողի և ծնողի համագործակցության դերը ընտանեկան դաստիարակության հարցում 6

Մանկավարժական աշխատողի և ծնողի համագործակցության ձևերն ու տեսակները կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերի լուծման համտեքստում 10

Ծնողական ժողովներ.....13

Ծնողական ժողովների կազմակերպում 16

Գործնական աշխատանք՝ Ծնողական ժողով.....19

Եզրակացություն.....21

Գրականություն.....25

Գրականություն

1. Ա. Մ. Դալլաքյան, Ս. Ա. Մարության «Նախադպրոցական մանկավարժություն» բուհական դասագիրք, «Գասպրինտ», Երևան 2008թ.

2. Козлова С.А., Куликова Т.А. ‘’Дошкольная педагогика,, Учеб. пособие для студ. сред, пед. учеб. заведений.

3. Միտոյան Հ., Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, Երևան 2020թ